ԿԱՐԾԻՔ

Լուսինե Ասատուրի Տանաջյանի

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ (ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ, ԹԵՀՐԱՆԻ, ԲԵՅՐՈՒԹԻ ՀԱՅԵՐԻ ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)»

վերնագրով Է.00.04 «ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման պաշտպանության ներկայացրած ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունն ունի հետևյալ կառուցվածքը՝ ներածություն, երեք գլուխ, եզրակացություններ, հավելված և սկզբնաղբյուրների ու գրականության ցանկ:

Ներածությունում ներկայացված են թեմային առնչվող հիմնական չափորոշիչները. այն է՝ ատենախոսության արդիականություն, նպատակ, խնդիրներ, մեթոդական հիմքեր, տեսական մոտեցումներ, գիտական նորույթ, տեսական և գործնական մոտեցումներ, փորձաքննություն, պաշտոնական հավանություն և կառուցվածք:

Ատենախոսության *գիտական նորույթն* այն է, որ առաջին անգամ քննարկվել են հայ սփյուռքում տեղի ունեցող սոցիալական փոփոխությունները:

Ատենախոսության գործնական կամ կիրառական նշանակությունը կարևորվում է տվյալ համայնքի, Հայաստան-սփյուռք փոխհարաբերությունների կառուցման, ՀՀ կողմից սփյուռքի քաղաքականության, ռազմավարության և օրենսդրական դաշտի մշակման գործում: Սփյուռքի սոցիալական ներուժի ճանաչման և գնահատման առումով սույն հետազոտությունը կարող է հիմք հանդիսանալ համայնքային հետագա զարգացումների կանխատեսման համար:

Հեղինակի կիրառած մեթոդաբանությունը թույլ է տվել ստանալ ներկայացուցչական տվյալներ՝ ապահովելով ստացված արդյունքների հավաստիությունը: Հետազոտություններն իրականացվել են որակական ու քանակական հետևյալ մեթոդների կիրառմամբ.

Փորձագիտական հարցում - Իրականացվել է տվյալ հիմնախնդրով զբաղվող մասնագետների հետ: Հեղինակը ձայնագրել է ավելի քան 60 փորձագիտական հարցազրույց:

Խորին հարցազրույց - Այն իրականացվել է սփյուռքի հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ (63 հարցազրույց):

Չնայնացված հարցում - Իրականացվել է երեք համայնքներում՝ քվոտային ընտրանքով, ձնակույտի մեթոդով: Ընտրանքի համար հեղինակի համար հիմք են ծառայել հետևյալ ցուցիչները՝ ծագումը (տարբեր երկրներից ներգաղթած և տեղացի), սեռը, տարիքը, կրթությունը: Հարցմանը մասնակցել են 230 հոգի՝ Թեհրանում, 250՝ Բեյրութում, 450՝ Լոս Անջելեսում:

Դիտարկում - Դիտարկման արդյունքներն ատենախոսն արձանագրել է օրագրերում և լուսանկարներում:

Հեղինակը հետազոտություններն իրականացրել է երեք փուլով՝ նախապատրաստական, բուն դաշտային աշխատանքներ ու տվյալների մշակում և վերլուծություն:

Գլուխ 1-ում (**Սոցիալական փոփոխությունները էթնիկության համատեքստում**) քննարկվել են հետևյալ հիմնախնդիրները.

1. Սոցիալական փոփոխությունների էությունը և տեսամեթոդաբանական մոտեցումները

Ատենախոսը նշում է, որ էվոլյուցիոնիստական տեսությունները մեծ մասամբ բացատրում են սոցիալական փոփոխությունները էնդոգեն (ներքին) պատճառներով՝ համարելով հասարակությունը կենսաբանական օրգանիզմ: Մյուս՝ էկզոգեն մոտեցումը ներկայանում է դիֆֆուզիայի տեսությամբ, երբ մի մշակութային մոդելը ներթափանցում է մեկ այլի մեջ: Սփյուռքի պարագայում, ըստ հեղինակի, առավել գերակա է երկրորդ մոտեցումը:

Ատենախոսը սոցիալական փոփոխությունների համատեքստում կարևորում է սոցիալական փոխակերպումների (տրանսֆորմացիայի) տեսությունը:

2. Սոցիալական փոփոխությունների էթնիկական բաղադրիչը

Ցանկացած էթնոսոցիալական գործընթաց, էվոլյուցիոն թե փոխակերպական, հանգեցնում է էթնիկ խմբերում որոշակի փոփոխությունների: Այդ փոփոխությունները պայմանավորված են արտաքին և ներքին գործոններով:

Ատենախոսն առանձնացրել է էթնիկ խմբի ադապտացիայի երկու հիմնական գործառույթ. Առաջին՝ նախորդ փորձի պահպանում, ինչը թույլ է տալիս այդ խմբին գոյատևել կոնկրետ տարածաժամանակային իրավիճակում, և երկրորդ՝ նոր փորձի կուտակում անընդհատ փոփոխվող միջավայրում:

3. Սոցիալական շարժունությունը սփյուռքում է՝ որպես փոփոխությունների արտահայտման ձև

Հեղինակն առանձնացրել է սոցիալական շարժունության մի քանի տեսակ, որոնց մեջ հիմնական են համարվում *ուղղահայաց (վերընթաց և վարընթաց) և հորիզոնական* ձևերը:

Օտար միջավայրում անհատի սոցիալական աճի ընթացքում ուղղահայաց սոցիալական մոբիլության մի քանի պատճառներ կարող են լինել, որոնց շնորհիվ նա կարող է հասնել որոշակի հաջողությունների: Վերջինս պայմանավորված է հետևյալ գործոններով՝ ընտանիքի սոցիալական կարգավիճակ, կրթական մակարդակ, ազգային պատկանելություն, մտավոր կամ ֆիզիկական կարողություններ, բնակության վայր, ելքի երկիր և այլն:

Գլուխ 2-ում (**Սոցիալական գործընթացների առանձնահատկությունները հայկական սփյուռքում**) հեղինակը քննարկել է հետևյալ հիմնախնդիրները.

1.Սփյուռքում էթնոսոցիալական գործընթացների ուսումնասիրության առկա մոտեցումների վերլուծություն

Ըստ հեղինակի, գոյություն ունեն սփյուռքի ուսումնասիրության մի քանի ուղղություններ, որոնք առնչվում են սոցիալական փոփոխությունների խնդրին: Դրանք կարելի է խմբավորել հետևյալ կերպ. ինքնության դրսևորումներ, ինքնակազմակերպման գործընթացներ, կառուց-

վածքային փոփոխություններ, ինտեգրման ընթացք, տարածական տեղաշարժեր, մշակութային, սոցիալ-ժողովրդագրական և այլ հատկանիշներ:

Ատենախոսը նշում է, որ սփյուռքի ուսումնասիրության նախնական փուլում շեշտադրվում է պատմահամեմատական մեթոդը: Ըստ այդմ, հիմնականում քննարկվել են դասական սփյուռք ունեցող էթնոսների օրինակները՝ հրեական, հայկական, հունական, իռլանդական և այլն: Այստեղ համեմատվում են սփյուռքի առաջացման պայմանները, տարածման պատճառները (տարհանում, ցեղասպանություն, բռնագաղթ և այլն), ինչպես նաև տրվել են դասական սփյուռքի հիմնական հատկանիշները: 1980-ականներին տվյալ մեթոդը քիչ արդյունավետ էր, քանի որ թույլ չէր տալիս համապարփակ հետազոտել սփյուռք երևույթը փոփոխվող պայմաններում: Վերջինիս անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ աճող միգրացիոն հոսքերի հետևանքով առաջացած էթնոսոցիալական գործընթացները ենթադրում են պատմական համեմատությունից անցում պատմական-տիպաբանական մեթոդին:

Հեղինակն առանձնացրել է սփյուռքի հետևյալ տիպերը. *զոհ-սփյուռք, աշխատանքային սփյուռք, կայսերական, առևտրական, մշակութային կամ հիբրիդային* սփյուռքի տեսակներ: *Զոհ-սփյուռքի* շարքին են դասվում հրեականը, հայկականը, աֆրիկյանը, իռլանդականը և պաղեստինյանը. *կայսերական* են՝ հին հունականը, բրիտանականը և ռուսականը. *Աշխատանքային* սփյուռքի թվին են դասվում՝ հնդկականը, չինականը, ճապոնականը, թուրքականը, իտալականը. *առևտրային* են լիբանանյան և ժամանակակից հնդկական սփյուռքները: Կան նաև սփյուռքի տիպաբանման այլ սկզբունքներ. «սեփական պետության» առկայություն, սփյուռք ունենալու պատմական փորձ (երիտասարդ կամ հին), սփյուռքացման աստիճան, փուլ (վերածնվող կամ մեռնող սփյուռք), աշխարհագրական սփռվածություն (ցրիվ և հավաք սփյուռք):

Հայ սփյուռքի ուսումնասիրությունների շրջանակը բավականին լայն է: Այն ներառում է հետազոտություններ՝ սփյուռքի ձևավորման պատմությունից ընդհուպ մեր օրերը: Այսօր հայ սփյուռքի տարբեր համայնքներ գնալով աճում են: Առավել մեծ համայնքներն են՝ ՌԴ-ն (ըստ մարդահամարի՝ շուրջ 1 մլն 130. 000, ըստ փորձագետների՝ 2 մլն), ԱՄՆ-ն (շուրջ 1,2 մլն), Ֆրանսիան (ըստ մարդահամարի՝ շուրջ 450.000), Վրաստանը (ըստ մարդահամարի՝ շուրջ 248.000, ըստ փորձագետների՝ 350.000), Ուկրաինան (շուրջ 130.000), Իրանը, Լիբանանը, Արգենտինան, Կանադան (յուրաքանչյուրում՝ շուրջ 80.000):

Հեղինակը հատկապես կարևորում է հայկական սփյուռքի ուսումնասիրության գործում էթնոսոցիոլոգ Յու. Հարությունյանի կատարած հետազոտությունները (1980-2000 թթ.): Այդ հետազոտությունները ներառում են Ռուսաստանի (Մոսկվա, Կրասնոդար) և նախկին ԽՍՀՄ տարածաշրջանի հայերին (Թբիլիսի, Տաշքենդ և այլն):

2. Հայկական համայնքների էթնոմշակութային միջավայրը և սոցիալական փոփոխությունները

Հեղինակը սփյուռքը դիտարկել է ըստ բնակության երկրի կրոնական, էթնիկական հատկանիշների և փոքրամասնությունների նկատմամբ տվյալ երկրի վարած քաղաքականության:

Կրոնական առումով հետազոտված համայնքները գտնվում են միմյանցից տարբերվող միջավայրերում, ինչն առանձնահատուկ նշանակություն է ունեցել համայնքների ինքնակազմակերպման, ինտեգրման, ազգային ինքնության պահպանման և այլ երևույթների վրա:

Ատենախոսը ափյուռքահայերի սոցիալ-ժողովրդագրական կազմի, միգրացիոն գործընթացների և տարածական փոփոխությունների համատեքստում հանգամանալից քննարկել է այդ երեք համայնքները:

Թեհրանի համայնքն ունի ազգային-մշակութային կենտրոններ ու սոցիալ-քաղաքական կառույցներ: Թեհրանահայերի գրեթե մեկ երրորդը ցանկություն ունի տեղափոխվել ՀՀ, 36,8%-ը նախընտրում է մեկնել այլ երկիր, 23,7%-ը տատանվում է, և միայն 8,8%-ը նպատակ չունի տեղափոխվելու: Այլ երկիր մեկնել ցանկացողների մեջ հիմնական ուղղությունը ԱՄՆ-ն է՝ պայմանավորված իրանահայերի միության զգալի ներկայությամբ:

Լոս Անջելեսի հայերի մեծ հոսքն, ըստ հեղինակի, 19-րդ դարից է սկսվել: Առաջին աշխարհամարտից հետո արդեն կազմավորվել էր հայկական մեծաքանակ համայնք: Ներկայում, ըստ 2003 թ. տվյալների՝ Լոս Անջելեսում և կից արվարձաններում բնակվում է շուրջ 600 հազար հայ (միայն 200 հազար բնակչություն ունեցող Գլենդելում հայության թիվը շուրջ 180 հազար է):

Հայերի մեծ մասը (77,5%) Լոս Անջելես է տեղափոխվել այլ վայրերից, որոնց կեսից ավելին հաստատվել է մինչև 1991թ.-ը: Նրանք մեծ մասամբ կենտրոնացած են Հոլիվուդում և Գլենդելում: Գլենդելի հայերի հիմնական մասը Արևելքից եկածներ են: Համայնքն ընդհանուր առմամբ հին (դասական) և նոր սփյուռքի միասնություն է: Դասական սփյուռքը, որի արդյունքն են հայկական դպրոցները, կուսակցությունները, միությունները, հայալեզու թերթերը, հիմնականում բեյրութահայերի սերունդներն են հիմնել մինչև 1980-ականները: Պարսկահայերի և հայաստանցիների ներգաղթով մեծ փոփոխություններ եղան դպրոցների լեզվական քաղաքականության մեջ: Առկա է նաև նոր սփյուռքը, որը հիմնականում կազմում են ՀՀ-ից գաղթածները: Վերջիններս միայն դպրոցներում են միախառնվում հին սփյուռքի ներկայացուցիչներին: Հին ու նոր սփյուռքից զատ կան նաև այսպես կոչված «ամերիկահայերը», որոնք շուրջ 50 տարի այստեղ են բնակվում և ունեն տարբերվող մշակույթ:

Լոս Անջելեսի հայերի կեսից ավելին (60,4%) ցանկություն չի հայտնել արտագաղթելու: ՀՀ մեկնելու մտադրություն ունի 10,2%-ը, մոտ մեկ քառորդը դժվարացել է կողմնորոշվել, և մի փոքր հատվածն է միայն մեկնելու ցանկություն հայտնել:

Բեյրութն առանձնանում է հայկական համայնքային կառույցների առատությամբ: Ընդհանրապես, Լիբանանն իր պետական կառուցվածքով համայնքային երկիր է: Սակայն ներքին անկայունությունն ու պատերազմական վիճակը ջլատել են երկրի սոցիալ-տնտեսական վիճակը: Այդ պատճառով Բեյրութում նկատվում է ընդհանուր արտագաղթի միտում: Արտագաղթը կապված է նաև գործազրկության հետ, որի հետևանքով երիտասարդները մեկնում են մասնավորապես Արաբական ծոցի երկրներ: Վերջինս, սակայն, կրում է սեզոնային բնույթ: Նրանք, ով-

քեր մշտական են մեկնում, հաստատվում են առավել հեռու վայրերում՝ ԱՄՆ, Կանադա, Եվրոպա և այլն: Երկրից մեկնել չցանկացողների թիվը մեծ է՝ 42,6%, 21,6%-ը մտադիր է տեղափոխվել ՀՀ, իսկ 27%-ը՝ չի կողմնորոշվում:

Այդ երեք համայնքներում էլ ընդհանուր առմամբ հայերի նկատմամբ գոյություն ունի դրական վերաբերմունք: Սակայն այս առումով մասնակի բացառություններ կան Լոս Անջելեսում: Հատկապես հետխորհրդային շրջանում գաղթածներն ունեն ոչ այնքան բարձր վարկանիշ ամերիկյան հասարակության մեջ:

Հայերի լեզվական ու կրթական վարքագծերն անմիջական ազդեցություն ունեն այլէթնիկ միջավայրում նրանց սոցիալական առաջընթացի համար: Դրանք կարևոր դեր են կատարում ինքնության պահպանման գործում: Այս առումով դիտարկվել են հետևյալ երևույթները. առաջինը վերաբերում է տան խոսակցական լեզվին, մյուսը՝ երեխաներին կրթության տալու նախընտրությանը: Լեզուն, լինելով ինքնության կարևորագույն բաղադրիչ, հաճախ է վտանգվում օտար միջավայրում: Օրինակ՝ ամերիկահայերի 61.7%-ի տան առօրյա խոսակցական լեզուն հավասարապես և՛ հայերենն է, և՛ անգլերենը:

Գլուխ 3-ում (Սոցիալական շարժունության հիմնական միտումները Լոս Անջելեսի, Թեհրանի, Բեյրութի հայկական համայնքներում (համեմատական վերլուծություն) հեղինակը քննարկել է երկու կարևոր հիմնախնդիր.

1. Հայերի սոցիալ-մասնագիտական խմբերի առանձնահատկությունները

Լոս Անջելեսի հայերի մասնագիտական զբաղվածության բնագավառները վերջին 20 տարիներին բավականին փոփոխվել են: Դեռևս 20 տարի առաջ առավել ընդունված և շահեկան էին համարվում այնպիսի մասնագիտությունները, ինչպիսիք են ոսկերչությունը, շինարարությունը, ավտոմեքենաների նորոգումը, կոշկակարությունը և այլն: Այժմ հիմնական ուղղվածությունը այլ ոլորտներն են (բժշկություն, իրավական համակարգ, տեխնոլոգիաներ, արվեստ, ֆինանսներ և այլն): Կտրուկ ավելացել է պետական կառույցներում աշխատողների թիվը:

Թեհրանահայերը մեծ մասամբ զբաղված են ֆիզիկական աշխատանքով: Վերջին տարիներին աճի միտում է նկատվում դեպի մտավոր աշխատանքը: Այդուհանդերձ, դեռևս անփոփոխ է իրանական հասարակության մեջ հայերի՝ որպես լավ արհեստավորի կերպարը:

Բեյրութում մի ստվար հատված զբաղեցնում է բարձր որակավորում ունեցող մասնագետների շարքերը: Սակայն համայնքում նկատվում է տնտեսական անկում, որի գործոններից էր սիրիահայերի ներգաղթը: Տնտեսական անկմանը նպաստող գործոններից էր նաև նախկինում առաջնային համարվող մասնագիտական մենաշնորհային դիրքերի զիջումը:

Լոս Անջելեսում կյանքի և առաջընթացի նկատմամբ չափանիշներն ու պահանջները բավականին բարձր են, ինչն էլ դառնում է մոբիլ վարքագծի շարժառիթ, ի տարբերություն Թեհրանի, որտեղ միջավայրի կրոնական և այլ առանձնահատկությունները թելադրում են համեմատաբար համեստ կենսական պահանջներ:

Լոս Անջելեսում գործարարները մեծ մասամբ ունեն բարձր որակավորում, իսկ Թեհրանում և Բեյրութում նրանց մասնագիտական որակավորումն այնքան էլ բարձր չէ:

Ուշագրավ են նաև հեղինակի դիտարկումները այդ համայնքներում սոցիալական տեղաշարժերի և սեռային պատկանելության փոխկապվածության ուղղությամբ:

Բեյրութում ֆիզիկական աշխատանք կատարողների մեծ մասը տղամարդիկ են: Կանայք հիմնականում զբաղված են սպասարկման ոլորտում և ընտանեկան բիզնեսում: Մտավոր աշխատանք կատարողների մեջ երկու սեռերն էլ ակտիվ են: Կանայք զբաղեցնում են սպասարկման կամ մտավոր աշխատանքային գործունեության ոլորտները: Տղամարդիկ առավելապես զբաղված են ձեռնարկատիրական, արհեստագործական և առևտրային գործունեությամբ:

Թեհրանի համայնքն իր կառուցվածքով և ավանդույթներով առավել պահպանողական է:

Համեմատելով երեք համայնքներում աշխատանքային զբաղվածության մեջ սեռային բաժանումները՝ ատենախոսը նշում է, որ օրինաչափորեն ֆիզիկական աշխատանքը երեք համայնքներում դիտարկվում է որպես տղամարդուն բնորոշ հատկանիշ:

Լոս Անջելեսում առավելապես ֆիզիկական աշխատանք կատարող հայերի զերակշիռ մասը (81,8%) մտադրություն չունի մեկնելու ԱՄՆ-ից: Բեյրութում մտավոր աշխատողների 46,5%-ը մտադրություն չունի երկրից արտագաղթելու:

2. Միջսերնդային և ներսերնդային սոցիալական շարժունության ընդհանուր և առանձնահատուկ կողմերը

Լոս Անջելեսի համայնքն ըստ ելքի երկրների բաղկացած է տարբեր խմբերից, որոնք պայմանականորեն ամբողջացվել են չորս հիմնական հոսքերում՝ Հայաստանից, Արևելքի երկրներից, ԱՊՀ-ից, Եվրոպայից և ԱՄՆ-ի այլ վայրերից եկած հայեր:

ԱՄՆ տարբեր շրջաններից եկածների պատկերը հետևյալն է՝ 57%-ը առաջին գործն սկսել է մտավոր աշխատանք կատարողների ոլորտում, 43%-ը ֆիզիկական աշխատողներ էին: Տեղափոխվելուց հետո գրեթե նույնությամբ պահպանել է աշխատանքային կարգավիճակը: Այնտեղ ծնված հայերը գործունեության երեք փուլում էլ (առաջին աշխատանքային գործունեություն, տեղափոխվելուց անմիջապես հետո և ներկայիս աշխատանքային գործունեություն) կենտրոնացած են առավելապես մտավոր աշխատանք կատարողների խմբում: Սա հեղինակը բացատրում է այն փաստով, որ այնտեղ ծնվածն արդեն իսկ ունի որոշակի սոցիալական սկզբնակետ, որի վրա սկսում է կառուցել կյանքի հետագա ընթացքը:

Կանանց ֆիզիկական աշխատանքի միտվածությունն ավելի բարձրացել է երկրորդ փուլում (25%-ից մինչև 55,9%), ինչը բացատրվում է տվյալ միջավայրում աշխատանքի ձևերի բաժանման ոչ ավանդական մոտեցմամբ: Տղամարդկանց մոտ ևս նմանատիպ արդյունք է գրանցվել (20%-ից 48,8%):

Լոս Անջելեսի պայմանները նպաստում են անհատի սոցիալական առաջընթացին՝ նրան տալով լայն հնարավորություններ՝ ցանկալի կարգավիճակ զբաղեցնելու համար: Ավանդական

«փակ» միջավայրում՝ Թեհրանում, որպես ազգային կրոնական փոքրամասնություն, հայերի սոցիալական կարգավիճակն ավելի կայուն է: Բեյրութում հայերի կարգավիճակը և միջավայրը ևս սոցիալական առաջընթացի հնարավորություն են տալիս:

Լ. Տանաջյանը կատարել է բավականին խորքային աշխատանք, որտեղ քննարկվել են հայ սփյուռքի սոցիալական փոփոխություններին առնչվող գրեթե բոլոր երևույթները: Հեղինակը հանգամանալից վերլուծել է այդ երևույթը սփյուռքի ներէթնիկ խմբերի համատեքստում: Նա վերլուծել է թեմային առնչվող վիճակագրական տվյալները, ազգագրական, ժողովրդագրական, պատմական նյութերը: Սակայն այս ուսումնասիրության գլխավոր աղբյուրը 2013-2015թթ. էթնոսոցիոլոգիական հետազոտություններն են Լոս Անջելեսի (2013թ.), Թեհրանի (2014թ.) և Բեյրութի (2015թ.) հայ համայնքներում:

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկում ընդգրկված են 111 միավոր աշխատություն և աղբյուր, որոնց գերակշիռ մասը (73) օտարալեզու է:

Աշխատանքում առկա են սոցիոլոգիական 3 աղյուսակ և 41 գծապատկեր (այդ թվում՝ հավելվածում 38 գծապատկեր), որոնք ամբողջությամբ հեղինակի կատարած հետազոտությունների արդյունք են և առաջին անգամ են մտնում գիտական շրջանառության մեջ:

Գնահատելով այս աշխատանքը, միաժամանակ ունենք որոշակի դիտողություններ

- Ատենախոսության վերնագիրը չնայած ընդհանուր առմամբ արտացոլում է թեզի բովանդակությունը, սակայն, մեր կարծիքով, երեք համայնքով հնարավոր չէ ամբողջությամբ ներկայացնել հայկական սփյուռքը:
- Տեքստը շատ է ծանրացած տեսություններով:
- Հեղինակի կարծիքով ԱՄՆ-ի առաջին քաղաքները, որտեղ բնակվեցին հայերը, Սան Ֆրանցիսկոն և Լոս Անջելեսն էին՝ իրենց արվարձաններով: Սակայն իրականում հայերը սկզբնական շրջանում հաստատվել են ԱՄՆ-ի արևելյան ափի բնակավայրերում (Ուստր, Բոստոն, Նյու-Յորք և այլն) և նույնիսկ առանց ընտանիքների, քանի որ դեռևս խորն էր հայրենիք շուտ վերադառնալու մտայնությունը:
- Ըստ իս, *էթնիկություն* եզրը ճիշտ չէ: Բացի այդ, հայերը ոչ թե *ենթաէթնիկ*, այլ *ներէթնիկ* են: Այդ համատեքստում լավ կլիներ, որ հեղինակն օգտագործեր, օրինակ, Յու. Բրոմլեյի աշխատությունները:
- Ցանկալի կլիներ, որ հեղինակը տար որոշ գիտական տերմինների հայերեն հոմանիշները, օրինակ՝ *սիներգետիկա, պրիմորդիալիզմ* և այլն:
- Հղումները երբեմն կատարվել են տարբեր ձևաչափերով. օրինակ՝ հղում 76 - **Նույն տեղում**, հղում 77- **նշված աղբյուր** և այլն:
- Տողատակի որոշ հղումներ նշված են հետևյալ ձևով՝ Լ. Տանաջյան, փորձագիտական հարցազրույց N 1, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Բեյրութ, 2015 թ.: Սակայն ճիշտ կլիներ ԴԱՆ-ը նշել հեղինակի ազգանունից հետո, առավել ևս, որ այն ճիշտ է

նշված գրականության ցանկում (օրինակ՝ Տանաջյան Լ., ԴԱՆ, 2013, ԱՄՆ Լոս Անջելես, խորին հարցազրույցների տվյալներ):

• Տեքստում գերակայում են փորձագիտական կամ խորացված հարցազրույցները: Այստեղ շատ մասնակի են ներկայացված սոցիոլոգիական գծապատկերները: Ընդհանուր 41 գծապատկերից 38-ը տարվել է հավելված, մինչդեռ ճիշտ կլիներ, որ այդ շատ արժեքավոր հեղինակային հետազոտությունների տվյալները ներկայացվեին բուն տեքստային մասում:

• Ձայնագրվել է շուրջ 60 փորձագիտական հարցազրույց: Իրականացվել է 63 խորացված հարցազրույց սփյուռքի հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Սակայն ցավոք չկան դրանց անվանումները և մասնագետ-փորձագետների ցանկերը: Լավ կլիներ, որ այդ ցանկում լինեին նաև սփյուռքի հարցերով զբաղվող ՀՀ պետական հաստատությունների համապատասխան մասնագետները, ովքեր իրազեկ են հայ համայնքների հիմնախնդիրներին:

• Ճիշտ կլիներ, եթե հավելվածում ներկայացվեին հեղինակի կազմած հարցաթերթերը:

• Լավ կլիներ նաև նմանատիպ հետազոտություններ իրականացվեին ՀՀ-ում, որպեսզի համեմատական այդ համատեքստում հնարավոր լիներ մշակել սփյուռքի համայնքների հետ համագործակցության մարտավարական ու ռազմավարական որոշակի ծրագրեր:

• Մի դեպքում հեղինակը չի ուզեցել տեքստը ծանրացնել իր իսկ կազմած սոցիոլոգիական գծապատկերներով, սակայն ներկայացնում է տեսական բնույթի աղյուսակներ:

• Ըստ հեղինակի, լոսանջելեսաբնակ հայերի շրջանում *ավանդական արժեքային տարբերը այնքան էլ ազդեցություն չունեն*, որն իմ կարծիքով օբյեկտիվ չէ:

• Ատենախոսի կարծիքով, Հայաստանից ԱՄՆ գաղթած հայերի մեծ մասն առաջին աշխատանքային գործունեությամբ մտավոր աշխատողներ են եղել (68,7%): Ըստ իս, 1960-ականների վերջերին և 1970-ականներին ԱՄՆ գնացած հայերի մեծ մասը ոչ թե մտավորականներ էին, այլ հիմնականում արհեստավորներ:

Նշված թերացումները չեն ազդում ատենախոսության գիտական արժեքի վրա:

Սա այն հետազոտություններից է, որը, գիտականից բացի, ունի շատ կարևոր գործնական նշանակություն: Այն արժեքավոր է մասնավորապես հնարավոր ներգաղթի կազմակերպման տեսանկյունից: Չի բացառվում, որ հեղինակի հետազոտած երկու համայնքներից (Թեհրան և Բեյրութ), կապված ռազմա-քաղաքական և տնտեսական իրավիճակների սրման հետ, տեղի ունենա զանգվածային արտագաղթ: Շնորհիվ այս հետազոտության, մենք ունենք գրեթե ճշգրիտ կամ օբյեկտիվ տվյալներ հնարավոր արտագաղթողների թվի ու նույնիսկ սոցիալ-մասնագիտական կազմի վերաբերյալ, և ըստ այդմ, անհրաժեշտ է մշակել պետական ծրագրեր ներգաղթի և ընդհանրապես՝ հայրենադարձության կազմակերպման համար:

Այսպիսով, ներկայացված թեզը լիովին բավարարում է թեկնածուական աշխատանքներին ներկայացվող պահանջները, և ես միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ ՀԱԻ-ում գործող մասնագիտական խորհրդին շնորհելու Լուսինե Ասատուրի Տանաջյանին պատմական գիտությունների թեկնա-

ծուի գիտական աստիճան Է.00.04 «ազգագրություն» մասնագիտությամբ հրապարակային պաշտպանության ներկայացված «Սոցիալական փոփոխությունները հայկական սփյուռքում (Լոս Անջելեսի, Թեհրանի, Բեյրութի հայերի էթնոսոցիոլոգիական հետազոտություն)» ատենախոսության համար:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի կրոնի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սամվել Սուրենի Մկրտչյան

ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի կրոնի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սամվել Սուրենի Մկրտչյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտքարտուղար, պատմ. գիտ. թեկնածու Լևոն Սահակի Հովսեփյան

25. 02. 2020 թ.